ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման՝ Հետազոտական աշխատանքների կարևորությունը երաժշտության դասին՝ <<ինքնուրույն մտածող մարդ>> հատկանիշի ձևավորման համատեքստում

Մասնակից՝ Լիլիթ Սարգսյան

Դպրոց՝ Փարաքարի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Ա. Կոշկարյան

Վաղարշապատ 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. 3

1. Հետազոտական աշխատանքների դերը և նշանակությունը <<Երաժշտություն>> առարկայի դասերին. 5
2. Գործնական աշխատանք. 11

Եզրակացություն. 14

Օգտագործված գրականության ցանկ. 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ:

Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **հետազոտական աշխատանքների կարևորությունը երաժշտության դասին՝<<ինքնուրույն մտածող մարդ>> հատկանիշի ձևավորման համատեքստում:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել հետազոտական աշխատանքների դերը և նշանակությունը <<Երաժշտություն>> առարկայի դասերին,
- ներկայացնել մեր կողմից իրականացված գործնական աշխատանքը:

Աշխատանքի տեսական հիմքը: Աշխատանքի տեսական հիմքը կազմել են բազմաթիվ գիտնականների աշխատություններ:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդները, ինչպիսիք են՝ պատմական, համակարգակառուցվածքային, դոկտրինալ մեկնաբանման և սոցիոլոգիայի մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 15 էջ:

1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ <<ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

Մեր օրերում արագ փոփոխություններ են տեղի ունենում տեխնոլոգիական,՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլ ոլորտներում: Մարդիկ կարիք ունեն ավելի արագ սովորելու, բազմաչափ մտածելու և ստեղծագործ լինելու, որպեսզի կարողանան հարմարվել փոփոխվող աշխարհին: Դրանք պահանջում են, որ անհատները ունենան բազմաթիվ տարբեր որակավորումներ: Այս տեսանկյունից կրթությունը դարձել է ավելի կարևոր, քան երբևէ: Այսպիսով, ինքնուրույն սովորող, ստեղծագործական, խնդիրներ լուծող, ինքնուրույն մտածող անհատներ կրթելը դարձել է ամենակարևոր նպատակներից մեկը այս դարաշրջանի կրթության համար: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Ըստ Մերտեսի (1991) ինքնուրույն մտածողությունը գիտակցված և կանխամտածված գործընթաց է, որն օգտագործվում է տեղեկատվության և փորձի ինքնուրույն մեկնաբանման կամ գնահատման համար: Ըստ Շանսի ինքնուրույն մտածողությունը փաստերը վերլուծելու, գաղափարներ առաջադրելու և կազմակերպելու, կարծիքներ պաշտպանելու, համեմատություններ անելու, եզրակացություններ անելու, փաստարկները գնահատելու և խնդիրներ լուծելու ունակությունն է:

<<Երաժշտություն>> առարկայի դասավանդումը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրամասն է, որը նպաստում է երաժշտական ճաշակի զարգացմանը, մշակույթի

այդ բնագավառի նկատմամբ հետաքրքրության ու սիրո առաջացմանը, զգացմունքային դաստիարակությանը:

Երաժշտությունը արվեստներից առավել վառ ու հուզական ձևերից մեկն է: Այն արդյունավետ և գործուն միջոց է երեխաների դաստիարակության գործում: Երաժշտությունն օգնում է լիարժեք բացահայտել երեխաների ընդունակությունները, զարգացնել երաժշտական լսողությունն ու ռիթմի զգացողությունը, սովորեցնել ճիշտ ընկալել կերպարների երաժշտական լեզուն:

Գեղեցկության ընկալումից և ճանաչումից է սկսվում հուզական մշակույթի և զգացմունքների դաստիարակությունը: Հուզական մշակույթն էլ իր հերթին խթանում է մտքի աշխատանքը, ստիպում խորհել բարոյական այս կամ այն չափանիշի իմաստի վերաբերյալ: Ուսուցիչը կենսական դեր ունի դասարանում՝ սովորողների համար ինքնուրույն մտածելու համապատասխան մթնոլորտ ստեղծելու գործում: Հարցերի լավ մշակված ռեպերտուարը, որն ակտիվացնում է տրամաբանական գործընթացը, կարող է օգնել սովորողներին կատարել եզրակացություններ և վերլուծություններ:

<<Երաժշտություն>> առարկայի դասավանդման ընթացքում մեծ դեր և նշանակություն ունեն հետազոտական աշխատանքները [1] : Հետազոտական բնույթի ցանկացած աշխատանք կատարելիս հետազոտողն այս կամ այն չափով առնչվում է գիտությանը: Արդի հետարդյունաբերական ժամանակաշրջանում գիտությունը կոչված է ապահովելու կայուն զարգացում, այսինքն՝ նրա արդյունքների ստացումը ոչ թե ինքնանպատակ է կամ էլ արդյունաբերական առաջընթացն ապահովող պարզունակ մեխանիզմ, այլ՝ միջոց՝ հասարակության ներդաշնակ և հավասարակշռված զարգացումն ապահովելու համար:

Երգեցողության գործունեությունը՝ մարդու ակտիվության այնպիսի գործընթաց է, որի ընթացքում իրականացվում են նրա այս կամ այն դիրքորոշումը միջավայրի, մարդկանց, խմբերի կամ խնդիրների նկատմամբ, որոնք նրան առաջադրում է կյանքը:

Երգեցողության գործունեությունը ունի իր դրդապատճառները և հետապնդում է որոշակի նպատակ, կազմված է առարկայական և մտավոր գործողություններից:

Երեխաների դաստիարակության գործում կարևոր տեղ ունի երգեցողությունը: Երգեցողության դերը մեծ է երեխաների բարոյական, մտավոր և ֆիզիկական

[1]Մազմանյան Մ.Ս., Երաժշտության դասավանդման մեթոդիկա,Երևան, 1994 թ. , էջ 89:

դաստիարակության գործում: Երեխայի լսողությունն ու ձայնն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները:

<<Երաժշտություն>> առարկայի ուսումնական պլանի համաձայն ներկայացվում է սովորողների հետազոտական աշխատանք կատարելու գրագիտության պահանջների ուսուցման և գործնական հմտությունների զարգացման մեթոդիկայի պահանջները:

Հետազոտական բնույթի շատ աշխատանքների կատարումից ու ձևակերպումից բացի կարևոր փուլ է աշխատանքի հանրային ներկայացումը, որը պատկերացումներ է ձևավորում ոչ միայն կատարված աշխատանքի, այլև հետազոտողի տարբեր որակների ու ցուցանիշների մասին:

Ներկայացման համար հետազոտողը կարող է պաստառներ, աղյուսակներ ու գրաֆիկներ ստեղծել կամ ներկայացնել սահկահանդես:

Որակյալ հետազոտություն իրականացնելու համար աղբյուրների ընտրությունն ունի առանցքային նշանակություն: Այսօր համացանցային տիրույթի և հրատարակչական գործի զարգացումը մի կողմից հետազոտողին առաջարկում է թեմատիկ հրապարակումների առատություն, սակայն մյուս կողմից ի հայտ է գալիս այդ առատությունից պետքականը «ֆիլտրելու» խնդիր:

<<Երաժշտություն>> առարկայի շրջանակներում հետազոտական աշխատանքի շարադրման ընթացքում շատ կարևոր է մի քանի սկզբունքների հետևելը: Դրանցից առավել կարևորներն են.

- ուսումնասիրողի միտքը պետք է շարադրված լինի հստակ տրամաբանական հաջորդականությամբ,
- ուսումնասիրողն իր մտքերն ու տեսակետները շարադրելիս պետք է դրանք հիմնավորի տեսական հիմնադրույթներով ու փորձարարական արդյունքով:

Հետազոտական աշխատանքի բուն տեքստն ամբողջացնելուց հետո անհրաժեշտ է ամփոփիչ եզրահանգումներ կատարել:

<<Երաժշտություն>> առարկայի դասընթացի շրջանակներում հետազոտական աշխատանք կատարելիս անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես տվյալ գիտության մեթոդներով, այնպես էլ ընդհանրական բնույթի մի շարք «չգրված» կանոններով, որոնցից մեկը, թերևս, հիշելն է, որ աշխատանքում արտահայտած յուրաքանչյուր

դրույթ, նույնիսկ միտք պետք է ամուր հիմք ունենա, պետք է երևա այդ մտքի ետևում հեղինակի ցուցաբերած համոզմունքը:

Հետազոտական աշխատանքների միջոցով սովորողները կարողանում են ինքնուրույն մտածել և զարգացնել իրենց մտածողությունը: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով[2]:

Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

---

[2] Воскобойникова Э. Г., Музыкальная педагогика в детских школах искусств. Общеразвивающее и предпрофессиональное обучение в классе фортепиано. Учебник и практикум для академического бакалавриата. М.: Юрайт, 2019, էջ 52:

Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն:

Հետազոտական աշխատանքները իրականացվում են նաև խմբային մեթոդով: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար:

Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողությունը[3]:

Սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը:

Գործունեության ձևերից մեկը անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիան է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Կիրառվում են շարժումային, պարային, երգչային և նվագարանային իմպրովիզացիաներ, փոքրիկ մեղեդիների հորինումներ, տրված անավարտ մեղեդու շարունակում և այլն: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, նպատակին հասնելու ձգտում, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը: Սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը: Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների՝ համերգասրահներ,

[3]Бермус А. Г., Практическая педагогика. Учебное пособие. М.: Юрайт, 2020, էջ 25:

թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, դրանք կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ: Եթե երեխան չունի երգելու կարողություն և հնարավորություն, ոչինչ, այդ երեխան թող ունկնդրի, նկարի երաժշտությունից կամ երգից ստացած տպավորությունները, թող երաժշտառիթմիկ շարժումներ անի կամ պարի, բայց թող մասնակցի: Անխտիր բոլոր սովորողները կարող են ունկնդրել երաժշտությունը, բնական / ծափ, դոփյուն, ճտոց, կտտոց/ և մանկական հարվածային նվագարաններով ցույց տալ զարկի ռիթմական պատկերներ:

Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների՝ (այդ թվում նաև վիրտուալ) համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, դրանք կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը:

Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Ուսումնական գործունեությունը մի ամբողջական գործընթաց է, որի մեջ հավասարապես ներկայացվում են գործունեության տարբեր ձևեր: Թե ի՞նչ ծավալով և ի՞նչ ձևերով կկիրառվեն դրանք, կախված է դասի նպատակից, խնդիրներից և տիպից:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Որպես գործնական աշխատանք աշակերտներին հանձնարարել ենք <<Երաժշտություն>> և <<Գրականություն>> թեմայի շուրջ իրականացնել համապատասխան հետազոտական աշխատանքներ, որոնք թույլ կտան սովորողներին ինքնուրույն մտածել և զարգացնել իրենց մտածողությունը:

<<Երաժշտություն>> և <<Գրականություն>> թեմայի շուրջ իրականացվող աշխատանքի հիմնական նպատակները հետևյալն են.

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:
- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

Վերոնշյալ նպատակների իրականացումը տեղի է ունենում երաժշտության դասավանդման ընթացքում ուսումնական գործունեության տարբեր ձևերի միջոցով: Երաժշտական ուսումնական գործունեության ձևերը դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կողմից կատարվող գեղարվեստական գործունեությունն է՝ երաժշտությամբ ինքնաարտահայտվելու միջոց:

Երաժշտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում է ուսումնական գործունեության մի քանի ձևեր: Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը:

<<Երաժշտություն>> և <<Գրականություն>> թեմայի շուրջ իրականացվող աշխատանքի ուղղություններն են.

- Գրական ստեղծագործություններ երգի ու նրա ուժի մասին:
- Գրականությունը որպես երգի հիմք (Չարենց, Թումանյան, Իսահակյան և այլք), ժամանակակից մշակումներ:
- Ստեղծում ենք երաժշտություն մեր սիրած-հավանած բանաստեղծությունների հիման վրա:
- «Երաժշտությունը իմ կյանքում» ստեղծագործական-վերլուծական աշխատանք. Ի՞նչ երաժշտություն եմ նախընտրում, ինչո՞ւ եմ հենց դա նախընտրում:
- Երաժշտությունը տանը, դպրոցում:
- Երաժշտական համագործակցություն. ժողովրդական երգերի ուսումնասիրում-կատարում-ձայնագրում:
- Երաժշտական թերապիա. Ի՞նչ է այն իրենից ներկայացնում:
- Դեբատ. Մի՞թե գոյություն ունի լավ և վատ երաժշտություն, ինչպե՞ս տարբերել դրանք:
- Հանդիպում-դասախոսություններ երաժշտագետների, երգիչների, ստեղծագործողների հետ:

<<Երաժշտություն>> և <<Գրականություն>> թեմայի շուրջ իրականացվող աշխատանքի կատարումից հետո սովորողները ներկայացրին իրենց արդյունքները: Կատարված աշխատանքների արդյունքների ամփոփումը իրենց մեջ ներառում էր հետևյալը.

- Տեսանյութեր, աուդիոնյութեր:
- Վերլուծություններ:
- Ստեղծագործական աշխատանքներ:
- Կարծիք նախագծի մասին:
- Լուսաբանում:
- Գրական-երաժշտական թատրոն:

<<Երաժշտություն>> և <<Գրականություն>> թեման անցնելով՝ սովորողները իմանում են, որ արվեստի այդ տեսակներն իրար հարազատ են: Խոսակցական և

երաժշտական «լեզուների» զարգացման օրինաչափությունները նման են իրար։ Դրանց մեջ ընդհանուր տարրեր կան. ռիթմը, շեշտը, կարճ և երկար վանկերը՝ խոսքի մեջ, տևողությունները՝ երաժշտության մեջ, արագ և դանդաղ տեմպերը, ձայներանգը, հնչերանգը և այլն։ Առանց գրականության չէին լինի այնպիսի երաժշտական ժանրեր, ինչպիսիք են երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և երգչային այլ ստեղծագործություններ։ Երաժշտության և գրականության միասնությունից շահում է ոչ միայն երաժշտությունը, այլ նաև գրականությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- <<Երաժշտություն>> առարկայի դասավանդման ընթացքում մեծ դեր և նշանակություն ունեն հետազոտական աշխատանքները: <<Երաժշտություն>> առարկայի դասավանդումը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:
- Երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրամասն է, որը նպաստում է երաժշտական ճաշակի զարգացմանը, մշակույթի այդ բնագավառի նկատմամբ հետաքրքրության ու սիրո առաջացմանը, զգացմունքային դաստիարակությանը:
- Երաժշտությունը արվեստներից առավել վառ ու հուզական ձևերից մեկն է: Այն արդյունավետ և գործուն միջոց է երեխաների դաստիարակության գործում: Երաժշտությունն օգնում է լիարժեք բացահայտել երեխաների ընդունակությունները, զարգացնել երաժշտական լսողությունն ու ռիթմի զգացողությունը, սովորեցնել ճիշտ ընկալել կերպարների երաժշտական լեզուն:
- <<Երաժշտություն>> առարկայի դասավանդման ընթացքում մեծ դեր և նշանակություն ունեն հետազոտական աշխատանքները: Հետազոտական բնույթի ցանկացած աշխատանք կատարելիս հետազոտողն այս կամ այն չափով առնչվում է գիտությանը: Արդի հետարդյունաբերական ժամանակաշրջանում գիտությունը կոչված է ապահովելու կայուն զարգացում, այսինքն՝ նրա արդյունքների ստացումը ոչ թե ինքնանպատակ է կամ էլ արդյունաբերական առաջընթացն ապահովող պարզունակ մեխանիզմ, այլ՝ միջոց՝ հասարակության ներդաշնակ և հավասարակշռված զարգացումն ապահովելու համար:
- Երգեցողության գործունեությունը՝ մարդու ակտիվության այնպիսի գործընթաց է, որի ընթացքում իրականացվում են նրա այս կամ այն դիրքորոշումը միջավայրի,

մարդկանց, խմբերի կամ խնդիրների նկատմամբ, որոնք նրան առաջադրում է կյանքը։

- Երգեցողության գործունեությունը ունի իր դրդապատճառները և հետապնդում է որոշակի նպատակ, կազմված է առարկայական և մտավոր գործողություններից։
- Երեխաների դաստիարակության գործում կարևոր տեղ ունի երգեցողությունը: Երգեցողության դերը մեծ է երեխաների բարոյական, մտավոր և ֆիզիկական դաստիարակության գործում: Երեխայի լսողությունն ու ձայնն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները։
- <<Երաժշտություն>> առարկայի ուսումնական պլանի համաձայն ներկայացվում է սովորողների հետազոտական աշխատանք կատարելու գրագիտության պահանջների ուսուցման և գործնական հմտությունների զարգացման մեթոդիկայի պահանջները։
- Հետազոտական բնույթի շատ աշխատանքների կատարումից ու ձևակերպումից բացի կարևոր փուլ է աշխատանքի հանրային ներկայացումը, որը պատկերացումներ է ձևավորում ոչ միայն կատարված աշխատանքի, այլև հետազոտողի տարբեր որակների ու ցուցանիշների մասին: Ներկայացման համար հետազոտողը կարող է պաստառներ, աղյուսակներ ու գրաֆիկներ ստեղծել կամ ներկայացնել սահկահանդես:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մազմանյան Մ.Ս., Երաժշտության դասավանդման մեթոդիկա,Երևան, 1994 թ. :
2. Бермус А. Г., Практическая педагогика. Учебное пособие. М.: Юрайт, 2020:
3. Воскобойникова Э. Г., Музыкальная педагогика в детских школах искусств. Общеразвивающее и предпрофессиональное обучение в классе фортепиано. Учебник и практикум для академического бакалавриата. М.: Юрайт, 2019: